27 / 02 / 2012թ. N_____

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ-Ի ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝ 17.02.2012թ. թիվ 157 / 8 հարցմանը՝ տեղեկացնում ենք հետևյալը՝

1. Սևան համայնքի 2011թ. բյուջեի միջոցներից ձյան մաքրման աշխատանքների համար հատկացվել է 8մլն. ՀՀ դրամ, որը և ամբողջությամբ տրամադրվել է համապատասխան ծառայություն իրականացնող ընկերությանը.
2. Սևան համայնքի 2012թ. բյուջեի միջոցներից ձյան մաքրման համար հատկացվել է 8մլն. դրամ, որից՝ առ 15.02.2012թ. տրամադրվել է 4.8մլն. ՀՀ դրամ համապատասխան ծառայություն իրականացնող ընկերությանը.

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2012թ. վերոհիշյալ ժամանակահատվածում, ինչպես հանրապետությունում, այնպես ել Սևանի տարածաշրջանում տեղացել է առատ ձյուն:

Սևան համայնքը իր հնարավորությունների սահմաններում / նույնիսկ արտակարգ իրավիճակներում / պատվով է իրականացրել ձյան մաքրման աշխատանքները, այսպես՝ ս / թ փետրվարի 1-ից մինչև 15-ը մաքրվել է շուրջ 600.000քմ մայթեր, փողոցներ, հրապարակներ, ինչպես նաև համայնքի կենցաղային աղբահեռացման աղբավայրի ճանապարհը: Հարկ ենք համարում նշել նաև, որ վերոհիշյալ մաքրման աշխատանքները հիշյալ ժամանակահատվածում իրականացվել են շուրջօրյա ժամանակացույցով:

Տեղեկատվության թղթային տարբերակը, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն «Հայաստանի Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի պաշտոնական տեղեկանքը կից կներկայացվի գրության հետ միասին:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Հ. ՄԱԼԽԱՍՅԱՆ